

« Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 57/4

25 դեկտեմբերի 2012թ.

« ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 11.12.2012թ-ի նիստում քննության է առնվել «Եվրոմոթորս» ՍՊԸ դիմում-բողոքը « ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ 15.11.2012թ. թիվ 1003143 ստուգման ակտի դեմ: Արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն վերոգրյալ ստուգման ակտը թողնվել է անփոփոխ: Մասնավորապես.

համաձայն « ԿԱ ՊԵԿ նախագահի 30.07.2012թ. թիվ 1003143 հանձնարարագրի « օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում «Եվրոմոթորս» ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում 15.11.2012թ-ին կազմվել է թիվ 1003143 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 9.486.780 դրամ:

Ստուգման ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է.

Ընկերությունը հիմնական միջոց հանդիսացող 4 (չորս) մարդատար ավտոմեքենաների համար հաշվարկել և 2011թ. շահութահարկի հաշվարկում համախառն եկամտից նվազեցրել է ամորտիզացիոն մասհանումների գումարը՝ 10029846 դրամ: Սակայն այդ ավտոմեքենաները որևէ աշխատակցին ամրակցելու, հաստիքային վարորդների հրամանագրման, ավտոմեքենաների վազքին վերաբերող ուղեթերթիկներ, ձեռքբերված վառելիքի ծախսին վերաբերվող հաշվառման այլ փաստաթուղթ առ այն, որ այն անմիջապես օգտագործվել է այդ ավտոմեքենաների շահագործման համար, ստուգման ընթացքում չի ներկայացվել:

Ստուգմամբ «Շահութահարկի մասին» « օրենքի 10 հոդվածի 1-ին կետի, այն է՝ հարկման նպատակով համախառն եկամտից նվազեցվում է եկամտի ստացման հետ կապված անհրաժեշտ և փաստաթղթերով հիմնավորված ծախսերը, և 12-րդ հոդվածի 1-ին կետի, այն է՝ հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է գործունեության մեջ օգտագործվող և մաշվածքի ենթակա հիմնական միջոցների ամորտիզացիոն մասհանումների գումարները, պահանջները համարվում է խախտված, որի արդյունքում ընկերությունը 2011թ-ի շահութահարկի հաշվարկում համախառն եկամտից 10029846 դրամ ավել ծախսի գումար է նվազեցրել, այսինքն՝ նույն չափով պակաս հարկվող շահույթ է հաշվարկել:

«Շահութահարկի մասին» « օրենքի 33-րդ հոդվածով սահմանված դրույքաչափով պակաս հաշվարկված շահութահարկի գումարը կազմում է 2.005.969 դրամ:

«Եվրոմոթորս» ՍՊԸ դիմում-բողոքում մասնավորապես նշված է.

ծախսերի անհրաժեշտ լինելու հետ կապված գտնում ենք, որ ստուգող մարմինը ոչ ստուգման ընթացքում և ոչ էլ ստուգման ակտում չեն հիմնավորել այդ ծախսերի ոչ անհրաժեշտ լինելը: Մասնավորապես, եթե այդ մեքենաները չեն օգտագործվել եկամտի ստացման հետ կապված նպատակով, ապա ինչ նպատակով են օգտագործվել, այնինչ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» « օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում: Իսկ ինչ վերաբերում է ծախսերի փաստաթղթերով հիմնավորված լինելուն «Շահութահարկի մասին» « օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ապրանքանյութական պաշարների, աշխատանքների, ծառայությունների, հիմնական միջոցների և այլ ակտիվների ձեռքբերման (և համապատասխան դեպքերում՝ այլ հարկատուների եկամուտներին վերաբերող) փաստաթղթերի հիմնավորման նկատմամբ ներկայացվող պահանջները սահմանում է « Կառավարությունը: « Կառավարության 25 օգոստոսի 1998 թվականի թիվ 525-Ն որոշմամբ սահմանված է ծախսերը հիմնավորող փաստաթղթերի նկատմամբ ներկայացվող պահանջները համարվում են բավարարված, եթե

դրանք որպես ծախս հաշվեգրելու համար ակտիվների ձեռքբերման ցծով իրականացված տնտեսական գործառնությունները հարկ վճարողի մոտ ձևակերպված են սկզբնական հաշվառման (հաշվապահական) փաստաթղթերով (հաշվապահական ու այլ փաստաթղթերով), և եթե ծախս ձևակերպող հարկ վճարողների մոտ փաստացի կատարված գործառնություններին վերաբերող առկա սկզբնական հաշվառման (հաշվապահական) փաստաթղթերն ունեն հաշվապահական հաշվառումը կարգավորող օրենքներով ու իրավական այլ ակտերով ծախսերի (ծախսումների) հավաստիության (հիմնավորվածության) նկատմամբ ներկայացվող պահանջներն ապահովելու համար անհրաժեշտ տվյալները և տարրերը, իսկ սույն որոշմամբ հաստատված կարգով նախատեսված՝ նյութական ու ոչ նյութական ակտիվների, ապրանքանյութական պաշարների, այլ ակտիվների ձեռքբերման դեպքում՝ նաև այլ անհրաժեշտ տվյալներ ու տարրեր:

Մասնավորապես, տվյալ դեպքում մեքենաները ձևակերպված են սկզբնական հաշվառման փաստաթղթերով (ներմուծման հաշիվ-ապրանքագրով) և դրանց շահագործման հանձնելու վերաբերյալ կազմված են մարդատար ավտոմեքենայի շահագործման հանձնման ակտեր: Ինչ վերաբերում է ստուգող տեսուչների բերած փաստարկներին <...ավտոմեքենաների վազքին վերաբերող ուղեթերթիկներ, ձեռքբերված վառելիքի ծախսին վերաբերվող հաշվառման այլ փաստաթուղթ առ այն, որ այն անմիջապես օգտագործվել է դրանց շահագործման համար, ստուգման ընթացքում չի ներկայացվել> հայտնում ենք, որ << կառավարության վերը նշված կարգը չի սահմանում ուղեթերթիկները որպես <Մ-ի՝ (մարդատար ավտոմեքենայի) շահագործման մեջ լինելու հանգամանքը հիմնավորող փաստաթուղթ: Միաժամանակ մեզ հայտնի չէ որևէ գործող նորմատիվ ակտ, որը կսահմանի նման փաստաթղթի ձև: <Ետևաբար, մարդատար ավտոմեքենայի գծով ամորտիզացիոն մասհանումների կատարման համար հիմք է հանդիսանում շահագործման հանձնված լինելու (շահագործման հանձնման ակտ) և փաստացի վազք իրականացված լինելու հանգամանքը, որոնք տվյալ դեպքում բավարարված են, իսկ ինչ վերաբերում է ձեռքբերված վառելիքի ծախսին վերաբերվող փաստաթղթերի բացակայությանը՝ Ընկերության կողմից ներկայացվել են վառելիքի 2011թ-ի ձեռք բերման փաստաթղթերը, իսկ ծախսագրումը կատարվել է փաստացի բենզինի կտրոնների օգտագործմանը համապատասխանորեն, այս հանգամանքը ստուգող տեսուչների կողմից անտեսվել է: Միաժամանակ <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> << օրենքի 5-րդ հոդվածի համաձայն, վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են:

Խախտվել է նաև <<<ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին> << օրենքի 8-րդ հոդվածի է) կետի պահանջները՝ Ընկերության կողմից 24.09.2012թ-ին ստուգող տեսուչներին ուղղված գրավոր հայտարարության մեջ բարձրացված հարցի լիարժեք հիմնավորող պատասխան մինչ օրս չի ստացվել:

<Եվրոմոթորս> ՍՊԸ-ի կողմից մեքենաները շահագործվել են և նվազեցումները շահութահարկի գծով ձևակերպվել են դեռևս 2001թ-ից, սակայն Ընկերությունում իրականացված բազմաթիվ ստուգումների ընթացքում, ինչպես նաև նախորդ բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգման ընթացքում նշված ծախսերը համարվել են անհրաժեշտ և փաստաթղթերով հիմնավորված և հետևաբար շահութահարկով ծախսագրման առումով ընդունելի: Տվյալ դեպքում խախտվել է <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> << օրենքի 7-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի պահանջները:

Ելնելով վերոգրյալից ընկերությունը խնդրում է քննության առնել սույն բողոքը և մասնակի անվավեր ճանաչել /վերացնել/ ստուգման ակտի 1-ին կետը:

<< ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև <անձնաժողով>), լսելով ընկերության ներկայացուցիչների և ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ բողոքը ենթակա է մերժման:

<Շահութահարկի մասին> ՀՀ օրենքի 10 հոդվածի 1-ին կետի համաձայն. <Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է դրա ստացման հետ կապված անհրաժեշտ և փաստաթղթերով հիմնավորված ծախսերի չափով>:

<Շահութահարկի մասին> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն. <Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է գործունեության մեջ օգտագործվող և մաշվածքի ենթակա հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն մասհանումների գումարի չափով՝ սույն հոդվածի 2-րդ, 3-րդ կամ 4-րդ կետերով սահմանված ժամկետներում>:

Վերոգրյալից հետևում է, որ ստուգման ակտում հիշատակված թվով 4 մարդատար ավտոմեքենաների գծով հաշվարկված ամորտիզացիոն մասհանումների գումարը 2011թ-ի հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամտից նվազեցվելու համար անհրաժեշտ պայման է համարվում այդ ավտոմեքենաների գործունեության մեջ օգտագործված լինելու հանգամանքը հիմնավորող ապացույցների (ավտոմեքենաները որևէ աշխատակցին ամրակցված չլինելու, դրանց վազքին վերաբերող ուղեթերթիկների բացակայության, ձեռքբերված վառելիքի ծախսին վերաբերվող հաշվառման փաստաթղթերի բացակայության հետևանքով) առկայությունը: Հիշատակված ապացույցների բացակայության պայմաններում, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընկերության կողմից կատարված փաստաթղթավորման համաձայն, վառելիքի ողջ ծախսը կատարվել է խնդրո առարկա ավտոմեքենաներից տարբերվող այլ ավտոմեքենաների մասով, ըստ էության, չի կարող հիմնավորված համարվել ավտոմեքենաների գործունեության մեջ օգտագործված լինելու հանգամանքը: Հետևապես, թվով 4 մարդատար ավտոմեքենաների գծով հաշվարկված ամորտիզացիոն մասհանումների գումարը հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամտից ենթակա չէր նվազեցման:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի <Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին> N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, Հանձնաժողովի որոշման նախագիծը ուղարկվել է վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ (այսուհետ՝ Գանգատարկման խորհուրդ): Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է դրական եզրակացություն:


Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Ստուգման ակտը թողնել անփոփոխ:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ